

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆՆ ՈՒ ԱՉԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՖՐԵՉՆՈՅԻ ՄԵՐ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան 19 Մարտի շաբաթավերջին եղաւ Ֆրեզնոյի մեր ծխական համայնքին հետ:

Կիրակի, Մարտ 19-ին, ան նախագահեց Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ փոխանցեց Տնտեսի Կիրակիին խորհուրդը ներկայացնող պատգամ մը: Ներկայ էին նաեւ Ազգ. Վարչութեան անդամներ:

Ս. Պատարագի աւարտին Առաջնորդ Սրբազանը եւ Ազգ. Վարչութեան անդամները հանդիպում ունեցան եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ երեսփոխաններուն հետ: Զննարկուեցան գաղութը յուզող հարցեր եւ ծրագիրներ:

Ապա, տեղի ունեցաւ սիրոյ սեղան, որուն ընթացքին, Առաջնորդ Սրբազանը ֆրեզնոյաբնակ երկու երախտաւորներու՝ Բարեշնորհ Սիեր Սրկ. Շիւրտըմեանի ու Տիար Ռիչըրտ Տարմանեանի յանձնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի շնորհած Սրբատառ Կոնդակները: Անոնք Վեհափառ Հայրապետին տնօրինումով արժանացած էին «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

Երկու պարգեւատրեալները բազմավաստակ դաստիարակներ են. Ռիչըրտ Տարմանեան տարիներ շարունակ մաս կազմած է Թեմիս Ազգային Վարչութեան ու Ազգ. Վարժարաններու ինսամակալ Մարմինին. Սիեր Սարկաւազ եւս տարիներ շարունակ ծառայած է մեր Թեմի կրթական համակարգին, անդամակցելով ինսամակալ Մարմինին եւ Ուսումնական խորհուրդին:

H. E. ARCH. MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE, AND EXECUTIVE COUNCIL MEMBERS VISIT THE FRESNO PARISH

His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the parish community of Fresno On Sunday, March 19. He presided over Holy Mass at Holy Trinity Arm Apostolic Church and gave a sermon on the Sunday of the Steward. In attendance were members of the Prelacy Executive Council. Following Holy Mass the Prelate met with Rev. Vahan Gosdanian, Pastor, and members of Board of Trustees and delegates, to discuss issues affecting the parish community.

Following services, a reception took place. The Prelate presented Pontifical Encyclicals to Mr. Richard Darmanian, long time active member of the Executive Council, and Arch-deacon Meher Chekherdemian, long time devoted member of the Board of Regents and Education Council. His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia had awarded the devoted educators with the medal of “St. Mesrob Mashdots” when He graced our Prelacy with His Pontifical visit.

ԱՐԺ. Տ. ՎԱԶԳԵՆ ԲՅՆՅ. ԱԹՄԱՃԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ԲԱՅԱՄԻ ԱԲԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Կիրակի, 19 Մարտի յետմիջօրեի ժամը 4:30-ին, Յ.Ս.Ը.Մ.-ի ԲԱՅԱՄ-ի մարզախաղերուն փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կլենտէյլ Բուլէճի մարզադաշտին մէջ:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Բնյ. Աթմաճեան ներկայ եղաւ փակման հանդիսութեան, իբրեւ ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազան հօր եւ փոխանցեց Սրբազանին օրհնութեան խօսքը:

PRELATE'S BLESSING TO *KAHAM*

On Sunday, March 19, the closing ceremonies of the H.M.E.M KAHAM games took place at Glendale College. Rev. Fr. Vazken Atmajian of Glendale's St. Mary's Church represented the Prelate and conveyed his blessings.

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Երեքշաբթի, Մարտ 21-ին, կէսօրէ առաջ ժամը 11-ին, Ազգային Առաջնորդարանի առժամեայ դահլիճին մէջ, տեղի ունեցաւ Թեմիս Կրօնական Ժողովի նիստը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան հօր:

Ժողովը քննարկեց Ս. Յարութեան տօնի նախապատրաստական եւ Թեմական հոգեւոր կազմակերպչական աշխատանքերն ու ծրագիրները, կեդրոնանալով կրօնական, դաստիարակչական եւ երիտասարդական մարզերուն վրայ:

PRELACY RELIGIOUS COUNCIL'S MEETING

On Tuesday, March 21, our Prelacy Religious Council held a meeting presided over by the Prelate at the temporary offices of the Prelacy in Encino. The meeting focused mainly on preparations for Easter, however, religious, educational and youth issues were also discussed.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Երեքշաբթի, Մարտ 21-ի յետմիջօրեին, Առաջնորդ Սրբազան հայրը Ջայ Դատի Յանձնախումբի անդամներուն հետ միասին հանդիպում մը ունեցաւ Congressman David Dryer-ի հետ: Հանդիպման նպատակն էր Ցեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւ մը բերկայացնել congress-ի նախագահութեան, յառաջիկայ Ապրիլ 24ին:

FOR THE RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE

In the afternoon of Tuesday, March 21, the Prelate along with members of the Armenian National Committee met with Congressman David Dryer. The purpose of the meeting was to discuss the draft of a resolution to be presented to the U.S. Congress for the recognition of the Armenian Genocide.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ CASPS-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Երեքշաբթի, Մարտ 21-ի երեկոյեան ժամը 6:30-ին, Առաջնորդ Սրբազանն ու Ազգային Վարչութիւնը հանդիպում ունեցան Ազգ. Առաջնորդարանի CASPS-ի վարչութեան հետ:

Հանդիպումը տեղի ունեցաւ Կլէտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան գրասենեակին մէջ: Խորհրդակցութեան նիւթ եղան հանրային վարժարաններ յաճախող հայ աշակերտներ ու անոնց ծնողները հետաքրքրող հարցեր եւ աշխատանքներ:

CASPS-ի ներկայացուցիչները իր անիջական ու հետագայ ծրագիրներուն եւ աշխատանքներուն մասին տեղեկութիւններ փոխանցեց Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Վարչութեան, որոնք մօտէն կը հետեւին այս յանձնախումբի գործունեութեան ու նիւթապէս ու բարոյապէս նեցուկ կը կանգնին անոր: Նոր աշխատանքերու ծիրին մէջ նկատի առնուած են Նորթ Յոլիվուտի եւ Պըրպէնքի պետական վարժարանները: Ծանօթ է նաեւ, որ CASPSը 26 Մարտին դաշնակի նուագահանդէս մը կազմակերպած է UCLAի մէջ:

THE PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEMBERS MEET WITH CASPS REPRESENTATIVES

On Tuesday, March 21, at 6:30 p.m., the Prelate and the Executive Council met with the representatives of CASPS (Committee for Armenian Students in Public School), at the offices of Glendale's St. Mary's Church. During the meeting issues were discussed of interest to students and parents of Public Schools, and information was given regarding CASPS upcoming events and programs. CASPS representatives informed that they intend to spread their work to the regions of North Hollywood and Burbank. CASPS has also planned a Piano concert on March 26 at the UCLA Schoenberg Hall.

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՀՈՎԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԺՈՂՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Երեքշաբթի, 26 Մարտի երեկոյեան, Առաջնորդ Սրբազան Հայրն ու Ազգ. Վարչութեան անդամները հանդիպում ունեցան Կլենտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներուն, հոգաբարձութեան եւ երեսփոխանականներուն հետ:

Առաջնորդ Սրբազան Հայրը եւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տիար Հրայր Պալեան ողջունեցին հոգաբարձութեան կազմն ու մանաւանդ նորընտիր անդամներն ու երեսփոխանները, : Ապա, Առաջնորդ Սրբազանը տեղեկութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի աշխատանքներուն մասին, կեդրոնանալով քրիստոնէական դաստիարակութեան, երիտասարդական միութեանց եւ այլ անմիջական մարզերու վրայ: Հիւրընկալ ժողովականները, իրենց կարգին, զեկուցեցին եկեղեցւոյ բարեգարդման ու ծխական համայնքի կեանքին աւելի եւս աշխուժացման աշխատանքներուն մասին, նշելով, որ երիտասարդներն ու պատանիները կ'արժանանան յատուկ հոգածութեան:

MEETING WITH PASTORS AND REPRESENTATIVES OF ST. MARY'S PARISH

In the evening of Tuesday, March 21, the Prelate and Executive Council met with Glendale's St. Mary's pastors, the Board of Trustees and delegates.

The Prelate and Executive Council Chairman Mr. Hrair Balian welcomed the newly elected Board Members and Representatives. The discussions covered Prelacy plans and endeavors, as well as the activities of the Parish. The host representatives stressed upon the activities of the youth group.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՄԵԾ ՊԱՅՈՑ ՄԻՋԻՆՔԸ ՏՕՆԵՑ
Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, Մարտ 22ը Մեծ Պահոց Միջինքին օրն էր: Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը նախագահեց Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Արեւագալի արարողութեան: Ներկայ էին Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, եկեղեցւոյ հոգեւոր հովիւներն ու Պոլսոյ Գալֆայեան հաստատութեան վարիչ Մայր Հռիփսիմէ Սասունեան, որ հիւրաբար մեր թեմը կը գտնուի:

Արարողութենէն ետք, կեսօրին, եկեղեցւոյ «Բաղրամեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Միջինքի ճաշկերոյթ, նախաձեռնութեամբ հիւրընկալ եկեղեցւոյ Տիկնանց Միութեան եւ հովանաւորութեամբ ու ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Սեղանի օրհնութիւնը կատարեց Առաջնորդ Սրբազանը: Ազգ. Մեսրոպեան Երկրդ. վարժարանի աշակերտները ելոյթ ունեցան արտասանութեամբ, իսկ եկեղեցւոյ երգչախումբի անդամները՝ երգերով: Խօսք առաւ Մայր Հռիփսիմէ Սասունեան: Միջինքի պատգամը փոխանցեց Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Միջինքի առիթով, նմանօրինակ հանդիսութիւններ կազմակերպուած էին նաեւ մեր թեմի ծխական բոլոր շրջաններուն մէջ:

THE PRELATE CELEBRATED *MICHINK*
WITH THE HOLY CROSS CATHEDRAL PARISH

On Wednesday, March 22, on the occasion of *Michink*, the Prelate presided over the Sunrise Services at Montebello's Holy Cross Mother Cathedral. Also present were Very Rev. Fr. Barthev Gulumian, the pastors of the church, and Mother Hripsime Sassounian, the directress of the Kalfaian Orphanage of Istanbul.

Following the service, the Ladies Auxiliary of the Cathedral hosted a luncheon at "Baghrastian" Hall, under the auspices of the Prelate. The luncheon began with the Prelate blessing the tables. The artistic program included recitations by students of Armenian Mesrobian High School and songs by the church choir. Mother Hripsime Sassounian expressed her thoughts on this occasion and Rev. Fr. Gulumian gave the message of the day.
